Սուսաննա Առաքելյան

ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Բանալի բառեր – Բաքու, կանոնադրություն, նածագիծ, մարդասիրական ընկերություն, հիմնադիր անդամ, որդեգիր, բարեգործություն, մշակութային, ցարական իշխանություն:

Բաքվի հայոց մարդասիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), որը XIX դ. երկրորդ կեսին Ռուսական կայսրությունում ստեղծված հայկական բարեգործական առաջին կառույցներից մեկն էր, ստեղծվել էր Բաքվի հայության ազգային-մշակութային զարգացմանը աջակցելու համար, ունեցել է իր կանոնադրությունը, որը հաստատվել է ռուսական կառավարության կողմից՝ 1864 թ. մայիսի 21-ին: Ընկերության ստեղծման խթանիչ ազդակ է հանդիսացել «Հյուսիսափայլ»-ում լույս տեսած մեծ լուսավորիչ Ստեփանոս Նազարյանցի «Հայերի կոչումն մարդկության մեջ» հոդվածը [1] : Այդ հոդվածում խոսելով հայերի անցյալի և ներկայի մասին, Ս. Նազարյանցն առաջարկում է կազմել մի ընկերություն, որի նպատակը պիտի լիներ ժողովրդի մեջ լուսավորության տարածումը: «Հայերը կարօտ են մի այնպիսի կրթութեան,- գրում է նա,- որ իւրեանց միջից, արմատից դէպ ի վեր և ազգային հիմքից գոյանար ու յառաջ գնար և այս գործը պարտական է կատարել Հայոց ազգը ամենևին ինքնիշխան, իւր յատուկ ձեռքի վաստակով, առանց նիւթական օգնութիւն խնդրելու տէրութենից: Մի ազգային միաբանութիւն, գործակից ընտրելով իւրեան մի ազգասէր, սրտացավ հոգևոր գլուխ, կարող է մեծ վաստակներ վաստակել և լուծանել այն խնդիրը, որ ժամանակը և Նախախնամութիւնը դրել է Հայոց առաջև Ռուսաստանումը»[2]:

Ստեփանոս Նազարյանցի հոդվածը խթան հանդիսացավ, որ հետագայում ոչ միայն Բաքվում, այլև Կովկասում և այլ վայրերում ստեղծվեն մարդասիրական ընկերություններ և նմանատիպ այլ կառույցներ: Նման պայմաններում է, որ բժիշկ Դավիթ Ռոստոմյանցի նախաձեռնությամբ ստեղծվում է մի միություն, որը պաշտոնապես ստանում է «Մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգոր Լուսավորչին Հայաստանի» անվանումը: Ընկերության նպատակը ռուսահայերի մեջ բարեգործություն և լուսավորություն տարածելն էր՝ առանց կրոնի և կոչման տարբերություն դնելու:

Դավիթ Ռոստոմյանցը և Մովսես Զոհրապյան Զոհրապյանցը կազմում են ընկերության կանոնադրությունը և հաստատելու համար ներկայացնում կովկասյան կոմիտեին: Կանոնադրությունը կազմելու ընթացքում, հիմնադիր անդամները համոզելով Բաքվի աչքի ընկնող մի քանի հայերի «կարողանում են գտնել 8 հիմնադիր անդամ, որոնք և ստորագրում են 10.600 ռուբլի դրամագլուխ: Թեև ընկերության հաստատված կանոնադրության 10-րդ պարագրաֆի համաձայն հիմնադիր անդամների թիվը 8-ն էր համարվում, բայց նախքան կանոնադրության հաստատումը, որը տևել է 1.5 տարի, հիմնադիր անդամները կարողացել էին գտնել ևս 5 ընկերակից: Դրանով է բացատրվում այն իրողությունը, թե ինչու ընկերության խորհուրդը 1870 թ. մայիսի 26-ի նիստի որոշմամբ հիմնադիր անդամի վկայագրեր է տվել 13 հոգու: Ռուսաստանի կայսր Ալեքսանդր 2-րդը 1864 թ. մայիսի 21-ի հրամանով հաստատում է ընկերության կանոնադրությունը՝ նախագծում կատարելով մի քանի փոփոխություններ[3]:

Բոլոր հիմնադիր անդամների տրամադրած գումարների քանակը կազմում էր 12.650 ռուբլի, որն էլ համարվում էր անձեռնմխելի գումար: Հիմնադիր անդամներից յուրաքանչյուրի ներդրումն անձեռնմխելի դրամագլխի մեջ ներկայացնում է հետևյալ պատկերը.

---

[1] «Հիւսիսափայլ», յունվար, 1859:
[2] «Հիւսիսափայլ», յունվար, 1859, էջ 10:
[3] Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 27, ց. 1, գ. 55, թ. 8:

«Ռ. Կ.

1. Տփխիսեցի բժշկապետ Դաւիթ Յարութիւնեան Ռոստոմեանց 500
2. Տփխիսեցի Ալեքսէյ Արտեմիչ Տէր-Ղուկասեանց 5000
3. Շուշեցի Ներսէս Նիկիտիչ Կրասիլնիկեանց 2000
4. Մովսես Զօհրապեան Զօհրապեանց 600
5. Շուշեցի Մուսայէլ Դանիէլեան Շահգեդանեանց 700
6. Շուշեցի Գրիգոր Հայրապետեան Թումայեանց 500
7. Բագուեցի Սարգիս Կիրիլիչ Այվազեանց 500
8. Շուշեցի Սարգիս Տէր-Յովհաննէսեան Տէր-Գրիգորեանց 700
9. Շամախեցի Գէորգ Պօղոսեան Լալայեանց 750
10. Շուշեցի Յակովբ Սահակեան Ապրեսեանց 300
11. Շուշեցի Դաւիթ Յովհաննիսեան Ադամեանց 500
12. Շուշեցի Օհանջան Գրիգորեան Հախումեանց 300
13. Շուշեցի Սարգիս Յարութիւնեան Գրիգորեանց 300

Գումարն է 12.650»[1]:

Կանոնադրությունը բաղկացած է 5 գլխից և 55 հոդվածներից: Առաջին գլխում զետեղված են ընդհանուր դրույթներ, որոնցից կարևորն այն էր, որ ընկերությունը գտնվում էր օրենքի պաշտպանության ներքո և ենթարկվում ռուսական կայսրության կանոններին:

Երկրորդ գլխում ներկայացված է ընկերության կազմը, այն է՝ հիմնադիր անդամներ, պատվավոր անդամներ և անփոփոխ անդամներ: Համաձայն դրա հիմնադիր անդամների թիվը 8-ն էր, թեև, ինչպես վերը տեսանք, հետագայում այդ թիվը հասել է 13-ի: Անփոփոխ և տարեկան անդամների թիվը սահմանափակ չէր: Ընկերության բոլոր գործերը կառավարում են նախ հիմնադիր անդամները, ապա ընկերության խորհուրդը և ընդհանուր ժողովը: Խորհուրդը իր հերթին բաղկացած էր նախագահից և 8 անդամներից, որոնք ընտրվում էին երեք տարով: Ընկերության գործերի կառավարման մեջ կարևոր մասնակցություն ուներ ընդհանուր ժողովը, որը գումարվում էր տարին մեկ[2]:

Երրորդ գլխում ներկայացվում էին ընկերության գործունեության ոլորտները: Հիմնական շեշտը դրված էր անապահով ընտանիքների երեխաների կրթության և դաստիարակության, ինչպես նաև աղքատ ու չքավոր ընտանիքներին դրամական նպաստներով աջակցելու, հիվանդներին անվճար բժշկությամբ ապահովելու վրա[3]:

Ընկերության մայր գումարների պահպանության և դրանց գործածության կարգը սահմանող հոդվածները զետեղված էին չորրորդ գլխում: Ընկերության միջոցներ էին համարվում հիմնական մայր գումարը, ընկերության անդամների կողմից տրված տուրքերը, դրամական նվերները, որոնք ստացվում էին ոչ ընկերության անդամներից, և շարժական ու անշարժ նվերները՝ ստացված մասնավոր անձանց կողմից: Ընկերության սեփականություն համարվող դրամագլուխները օգտագործվում են միայն այն դեպքում, երբ խնդիրը առնչվում էր ընկերության գործունեության ոլորտի հետ: Հակառակ դեպքում, այն ընկնելու էր օրենքի պատասխանատվության տակ[4]:

Հինգերորդ գլուխը վերաբերվում էր ընկերության հաշիվներին, որոնք կազմվում էին յուրաքանչյուր նախորդ տարվա համար: Դրանք ներառում էին տեղեկություններ ինչպես ընկերության գործունեության, այնպես էլ գումարային ծախսերի մասին: Ընկերությունը կարող էր իր ցանկությամբ հաշվեցուցակներ ներկայացնել տերության ատ-

[1] Նույն տեղում, էջ 8:
[2] Տե՛ս «Կանոնադրութիւն Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. Գրիգորի Լուսաւորչին Հայաստանի», ա.տ. և ա. թ., էջ 15, կամ «Պատմական համառոտ տեսութիւն Բագուայ հայոց մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունեութեան», Բագու, 1891, էջ 15:
[3] Նույն տեղում, էջ 19:
[4] Նույն տեղում, էջ 25:

յաններին: Սակայն, անհրաժեշտության դեպքում նրա բոլոր գործերը Կովկասի փոխարքայի թույլտվությամբ կարող էին բացվել տերության գործակալների առջև[1]:

Ինչպես արդեն նշվել է, հաստատված կանոնադրության համաձայն, ընկերությունն իր բնույթով կրթական և բարեգործական էր: Այն իր առջև խնդիր էր դրել գործել միայն ռուսական կայսրության սահմաններում: Կենտրոնատեղին լինելու էր Բաքու քաղաքը, ինչը սակայն, չէր բացառում իրադարձությունների հաջող ընթացքի դեպքում, ընկերության անդամների մեծ մասի պահանջով, կենտրոնը Անդրկովկասի որևէ այլ քաղաք փոխադրելու հնարավորությունը: Ընկերության ընդունած որոշումներն ու վճիռները չէին կարող չհամապատասխանել ռուսական կայսրության օրենքներին: Բացի արդեն սովորող, աղքատ ընտանիքների երեխաներին աջակցելուց, ընկերությունն իրավունք ուներ նաև սեփական դպրոցները բացել[2]:

1889-1894 թթ. Բաքվի Մարդասիրական ընկերությունը խուսափում է իր բյուջեն ծանրաբեռնել որդեգիրների[3] պահպանության ծախսերով: Եղած միջոցներն այն օգտագործում էր տարրական դպրոցների ծախսերը հոգալու վրա: 1896 թ. հայկական դպրոցների փակումը, սակայն նորից վերակենդանացնում է որդեգրական գործունեությունը, և ընկերությունը սկսում է գումարներ տրամադրել այդ նպատակի համար[4]:

«Այս շրջանում էլ, այն է 1895 թ. կառավարութեան կողմից մեկնաբանուեց Մարդասիրականի կանոնադրութեան մէկ կետը, որ նրա գործառնութիւնները տարածւում են միայն Ռուսաստանում, ուստի և նա իրաւունք չունէր որդեգիրներ պահելու արտասահմանեան դպրոցներում,- գրում է Դավիթ Անանունը,- իր որդեգրական գործունէութեան առաջին շրջանում Մարդասիրականը խտրութիւն չէր դրել ռուսական և արտասահմանեան դպրոցների մէջ, միայն թէ սովորողը ռուսահպատակ լինի, բայց այժմ արգելքներ էին յարուցւում»[5]:

1890-ական թթ. երկրորդ կեսին՝ կապված Ռուսաստանում իրականացվող ազգային ճնշումների հետ, անբարենպաստ իրադրություն ստեղծվեց, որի հետևանքով արգելվում էին մայրենի լեզվով հրատարակությունները, հալածվում էին մշակութային գործիչները, փակվում հայկական դպրոցները և բարեգործական կազմակերպությունները: Այդ ամենը Կովկասի կառավարչապետ իշխան Գ. Գոլիցինի սադրանքի հետևանքն էր, կապված Պետերբուրգում նրա գաղտնի զեկույցի հետ: Այդ զեկույցը պատահաբար հրատարակվել էր Լոնդոնում: Այն լիովին բացահայտում էր կառավարչապետի հայատյաց դիրքորոշումը: Իր զեկույցում վերջինս մասնավորապես նշում էր, որ «Հայկական շարժումը նպատակ ունի՝ վերականգնել անցեալ Հայաստանի անկախութիւնը… և տեղական իշխանութիւնը բավականաչափ ուժ ունի անմիջապես խեղդելու հայկական խառնակութեան փորձը»[6]: Ապա շարունակելով խոսել հայկական ծխական դպրոցների մասին, նշում է. «Կովկասի հայոց ծխական դպրոցները լուսաւորութեան մինիստրութեան յանձնուիլը՝ համաձայն Ձեր Մեծութեան 1897 յունիս 14-ի հրամանագրի՝ վերջին ծայր կարևոր է, իբրև միջոց՝ պաշտպանելու նոր սերունդը հայ կղերի վնասաբեր ազդեցութեան դէմ…..Ուստի և Կովկասի բարձրագոյն իշխանութեան հրամանով, 1897-ին փակվեցին 320 հայ դպրոցներ: 31 դպրոց միայն բաց մնաց, որոնցից մի քանիսն էլ յետոյ փակւեցին, ... »[7]: Բարեգործական ընկերությունների մասին զեկույցում նշվում էր. «Հայոց բարեգործական ընկերութիւնները զբաղուած են աւելի քաղաքականութեամբ, քան թէ բարեգործութեամբ: …Յայտնի տեղեկութիւնները

---

[1] Նույն տեղում, էջ 31:
[2] Նույն տեղում, էջ 19:
[3] Ծանոթ. Որդեգիրներն այն երիտասարդներն էին, որոնց Մարդասիրական ընկերությունն իր ամբողջ գործունեության ընթացքում խնամքի տակ է պահել: Օգնել է նաև այլ և այլ դպրոցներում սովորող հայ պատանիներին դրամով և գրքերով: Մարդասիրականը ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձրել որդեգիրների վրա, քանի որ հույս ուներ, որ նրանք ուսումը ավարտելուց հետո հասարակության համար պիտանի անդամներ կդառնան: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 27, g. 1, գ. 55, թ. 41:
[4] Հայաստանի պատմության թանգարան (այսուհետ ՀՊԹ), Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, բմ 840, մմ 10884, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն հայոց. 1864-1913 թթ., էջ 50:
[5] Նույն տեղում, էջ 51:
[6] Ակնունի Է., Կովկասեան վէրքեր, հ. Ա, ժընեվ, 1903, էջ 77:
[7] Նույն տեղում, էջ 79:

ապացուցեցին, որ անջատական ագիտացիայի շատ կուսակիցներ այդ ընկերութիւնների անդամ են: Նրա դրամները յաճախ յատկացնում են օտար երկրների մէջ հայեր դաստիարակելու, մի պարագայ, որ հակառակ է ռուս կառավարութեան պետական սկզբունքներին» և ի վերջո եզրակացություն անելով «առաջարկում է կայսրին՝ թոյլատրել իրան՝ ջնջելու Կովկասի հայոց բարեգործական հիմնարկութիւնները»[1]:

1899 թ. հայոց բոլոր ընկերությունները փակվում են՝ բացի Թիֆլիսում գործող Հրատարակչական ընկերությունից: «Կառավարութիւնը յայտնեց, որ փակւած ընկերութիւններից ամեն-մեկը կարող է վերաբացւել, միմիայն համաձայն այն կանոնադրութեան, որ մշակել է ինքը կառավարութիւնը, և դրա համար ամեն մի ընկերութիւն պիտի առանձին խնդիրք ներկայացնի կովկասեան բարձր իշխանութեան»[2]: Որոշ ժամանակ անց գրեթե բոլոր ընկերությունները վերաբացվում են, բայց առանց մասնաճյուղերի: 1899 թ. հուլիսի 6-ին Ռուսաստանի ներքին գործերի նախարար Ի. Գորեմիկինը «Մարդասիրական ընկերություն հանուն ս. Գրիգոր Լուսավորչին Հայաստանի» ընկերության նոր կանոնադրությունը հաստատելիս նրան զրկում է մշակութային և կրթական գործունեություն ծավալելու իրավունքից և թույլ է տրվում բարեգործությամբ զբաղվել միայն Բաքվի նահանգի սահմաններում[3]: Դրանից հետո «Մարդասիրական ընկերություն Ս. Գրիգորի Լուսավորչի Հայաստանի» ընկերության գործունեության շրջանակները սահմանափակվելու հետևանքով այն ստացավ «Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերություն» անվանումը: Այդ կանոնադրության զորությամբ ընկերության գործունեությունը սահմանափակվեց, և կրթական ու ուսումնական նպատակները դուրս մնացին նրա ծրագրից[4]:

1899 թ. հուլիսի 6-ի կանոնադրությունը պատճառ դարձավ, որ Ընկերությունը վերջ տա պատահական բարեգործության համակարգին և որդեգրի այդ ասպարեզում հաստատ ու մշակված գործելակերպ: Նրա առաջին քայլերից մեկը եղավ այն, որ նա փոխեց աղքատների օգնության այն ձևը, որն ընդունված էր ողորմություն անվանել: Դավիթ Անանունը անդրադառնալով դրան, գրում է. «... նպաստներ պիտի ստանային նրանք, որոնք անընդունակ էին որևէ արդիւնաւէտ աշխատանքի կամ թէ ծայրայեղ կարիք էին զգում: Այս սկզբունքը հետևողականօրէն իրագործելու համար Մարդասիականը պիտի ստեղծէր իր հասարակաօգուտ հիմնարկութիւնները...»[5]:

Քանի որ ընկերության գործունեության շրջանակները խիստ սահմանափակվել էին, այն իր հավաքած գումարները նվիրաբերում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանին և Շուշու հայոց հոգևոր դպրոցին[6]: Այս դրությունը շարունակվում է մինչև 1912 թվականը: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը Բաքվում բացում է մի շարք բարեգործական հաստատություններ՝ որբանոցներ, ձրի և էժանագին բնակարաններ աղքատների համար, մսուր, հայ կանանց համար լվացք անել սովորեցնելու լվացքատուն և սպիտակեղեն կարելու արհեստանոց, կառուցելով այդ հաստատությունների համար մի քանի շենքեր[7]:

1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II-րդը հաստատում է հայ եկեղեցապատկան հողերը և գույքը բռնագրավելու մասին օրենքը, համաձայն որի հայ-առաքելական եկեղեցու կալվածքներն ու եկամտաբեր գույքը հանձնվում էին համապատասխան նախարարությունների տնօրինությանը, բռնագրավվում էին եկեղեցապատկան այգիները, վարելահողերը և այլն[8]: Այս օրենքը ոտնահարում էր ոչ միայն հայերի կրոնական զգացմունքները, այլև նրանց քաղաքական ու մշակութային շահերը: Ցարիզմը փորձում

---

[1] Նույն տեղում, էջ 81:
[2] Նույն տեղում, էջ 109:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, g. 2, գ. 1921, թ. 27:
[4] Տե՛ս նույնը, ֆ. 27, g. 1, գ. 137, թ 4:
[5] ՀՊԹ, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, բմ 840, մմ 10884, Դավիթ Անանուն, Մարդասիրական ընկերութիւն հայոց. 1864-1913 թթ., էջ 74:
[6] Տե՛ս Ստեփանյան Գ., Բաքու քաղաքի հայության պատմությունը, Ե., 2011, էջ 193:
[7] Տե՛ս «Հաշիւ 1913 թ. գործունեութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան, յանուն Ս. Գրիգոր Լուսաորչի», Բագու, 1914, էջ 4:
[8] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. VI, Ե., 1981, էջ 351:

էր ինչ որ կապ գտնել հայ եկեղեցու ունեցվածքի և հայ ազգային շարժումը ղեկավարող կազմակերպությունների միջև:

1904 թ. դեկտեմբերի 4-ին Ընկերությունը դիմում է հղում Ռուսաստանի ներքին գործերի նախարար Ս. Միրսկուն և խնդրում գրադարանի վերաբացման իրավունք: Ի պատասխան այս դիմումի՝ 1905 թ. հունվարի 29-ով թվագրված մի գրությամբ Բաքվի նահանգապետը պատասխանում է ընկերության խորհրդին, որ Ներքին գործերի նախարարությունը թույլ է տալիս ընկերության կանոնադրության 4-րդ հոդվածը լրացնելու հետևյալ բովանդակությամբ. «Ընկերութեանը թոյլ է տրւում բանալ Բագու քաղաքում գրադարան, բայց առանց ընթերցարանի: Գրադարանի կազմակերպութիւնը պայմանաւորւում է ճիշտ և անշեղ գործադրութեամբ այն կանոնների, որոնք պարունակում են գրաքննութեան և մամուլի վերաբերեալ՝ 1890 թուի կանոնների 75-րդ յօդուածի ծանօթութիւնը»[1]:

1913 թ. մայիսի 21-ին ցարական իշխանությունները վերականգնում են ընկերության կրթամշակութային գործունեությունը՝ միաժամանակ վերականգնելով նաև նրա նախկին՝ «Հայոց Մարդասիրական ընկերություն հանուն Ս. Գրիգոր Լուսավորչի»[2] անվանումը: Չնայած Մարդասիրական ընկերության 1913 թ. հրատարակված գործունեության հաշվում նշվում է, որ նոր կանոնադրության համաձայն ընկերությունը իրավունք է ստանում նախկինի պես զբաղվելու մշակութային և կրթական ծրագրերով, սահմանափակվելով միայն Բաքվի նահանգով, նույն թվականին «Բագուի ձայն» թերթը գրում է. «Նոր կանոնադրութիւնը զգալի կերպով տարբերւում է հնից, նորը աշխատում է թողնել նախկին զուտ բարեգործական բնույթը»[3]: Այնուհանդերձ, հենց 1913 թ. հաշվում հիշատակվում է, որ կանոնադրության ընդունումից հետո ընկերության կատարած առաջին քայլերից մեկը եղել է այն, որ նպաստ է տվել գյուղական չորս դպրոցների[4]:

Ընկերության բարեգործական գործունեությունը լայն ծավալ է ընդունում հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, հիմնական գործունեությունը ծավալվում է գաղթականներին օգնելու ուղղությամբ: Իհարկե, սա կատարվում էր ցարական կառավարության թույլտվությամբ, քանի որ մինչ այդ նման կազմակերպությունների և ընկերությունների գործունեությունը Ռուսական կայսրության տարածքում արգելված էր: Նրանց կրթական-լուսավորչական գործունեությունը չէր համապատասխանում Կովկասում ցարական իշխանությունների վարած գաղութային քաղաքականությանը և ընկերությունը չէր կարող գործել իր կանոնադրությունից դուրս:

Մեծ է եղել Բաքվի Հայոց մարդասիրական ընկերության դերը լուսավորության և ազգային մշակույթի զարգացման գործում: Նրա ստեղծումը բխում էր ժամանակի պահանջներից: Ամենևին պատահական չէր, որ առաջին արձագանքողը եղավ Բաքուն, որտեղ մեծ էր հայկական կապիտալը: Դա նաև խոսուն վկայություն էր հայ հասարակության առողջ ջիղ ունենալու մասին: Թեև գոյություն չուներ հայոց անկախ պետականություն, որի ուշադրության կենտրոնում պետք է լիներ ազգային լեզվի և մշակույթի պահպանման գաղափարախոսութունը, Բաքվի մարդասիրական ընկերությունն իր գործունեության մեջ շեշտը դնում է հենց նման հարցերի լուծման վրա: Դա վկայում է որ ընկերությունն իր առջև դրել էր այնպիսի համընդհանուր արժեքների ստեղծման և պահպանման խնդիր, որոնք այդ ժամանակ արդիական էին:

Сусанна Аракелян, Устав Бакинской Армянской гуманитарной ассоциации, - Целью статьи является рассмотрение устава Гуманитарной ассоциации Баку, которая вела образовательную и благотворительную деятельность в конце 19-го-начале 20-го века. Целью

---

[1] ՀՊԹ, Նոր և նորագույն պատմության բաժնի ֆոնդ, բմ 840, մմ 10884, Մարդասիրական ընկերութիւն հայոց. 1864-1913 թթ., Անանուն Դավիթ, էջ 68:

[2] Տե՛ս «Հաշիւ 1913 թ., գործունէութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. Գրիգոր Լուսաորչի», էջ 4:

[3] «Բագուի ձայն», 9 հոկտեմբերի, 1913, N 132:

[4] Տե՛ս «Հաշիւ 1913 թ., գործունէութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան յանուն Ս. Գրիգոր Լուսաորչի», էջ 4:

создания Ассоциации была поддержка национально-культурного развития армян в Баку и согласно уставу ассоциация должна была действовать в границах Российской империи.

Устав Гуманитарной Ассоциации со временем перетерпел некоторые изменения, которые были вызваны колониальной политикой царского правительства на Кавказе. Тем не менее, Ассоциация инициировала создание универсальных ценностей, которые были актуальными для того времени.

Susanna Arakelyan, The charter of Baku Armenian Humanitarian Association, - The article aims to examine the Charter of Baku Humanitarian Association, which had educational and charitable functions. The Association was established to support national and cultural development of the Armenians of Baku and in accordance with the Charter, the association operated within the boundaries of the Russian Empire from the end of the 19th c. to the beginning of the 20th c.

The Charter of the Humanitarian Association over time underwent some changes, which were caused by the colonial policy of the tsarist government in the Caucasus. However, the Association initiated the creation of universal values that were relevant to those times.